

վասն զի կը համոզուինք որ այլ եւս չը պիտի մեղանչէ : Ըսել է որ անկեղծ խոստովանութեան հետ կ'ապրուած է արտիփոխութիւնը և նորոգութիւն, որով անցեալ յանցանքները կը զղջայ և կը հրաժարի անոնցմէ և կ'առաջագրէ վերստին չը մեղանչել :

Մահուան յիշատակը միշտ մեր մտայ մէջ ունենալը չը մեղանչելու որոտնառ է . վասն զի մահը մեր բոլոր գործոց և հեշտութեանց վախճանն է . մահը անհրաժեշտ է մեզ որով կը փոխադրուինք այս անցաւոր կեանքէն դէպ ի յաւիտենական կեանքը , ուր ամեն բան վերջ չունի : Արդ եթէ մեզայ ճանքով հոն անցնինք , որ թշուառութեան տանող ճանապարհն է , յաւիտենական , վերջ չունեցող թշուառութեան պիտի մտնուինք . իսկ եթէ սրբութեան ու մարգարութեան ճանքով գերեզմանէն անդին անցնինք , որ յերջանկութիւն տանող ճանապարհն է , յաւիտենականապէս երջանիկ պիտի լինինք . ուրեմն յիշելով մահը՝ յիշած կը լինինք մեր մեղքը և մեր յաւիտենական կեանքը եւ եթէ մեր բանականութիւնը արթուն է , անշուշտ այս յիշատակութեամբ պիտի պատրաստենք մեր անձը որ արժանի ըլլանք երջանիկ կենաց . պիտի սպարաստուինք ըստ ամենայնի անանկ՝ որ երկիւղ կամ նոր սպարաստութեան հոգ մը չունենանք մահուան հասած վայրկենին . այլ մեր այս ճանապարհորդութեան ամեն պատրաստութիւնն ունեցած ըլլանք . առաքինութեամբ և սրբութեամբ ճշխանալով բնաւ բանի մը կարօտութիւն չունենանք :

(Շարունակելի :

ԱՌ ԶԱՄՈՒՌՔԵԱՆ

Վարդացինք ձեր գրածը Հայրենիք մէջ եւ հաւատարիկ համառօտիւ կը պատասխանեմք :

Մեր գրածը ըստ ձեր ասութեան հիմ չալար հիմ քաշուլ չալար տեսակէն է եղեր . ինչ որ ձեզ ըսել վայել էր , մեզ կ'ասէք . հոգ չէ , զի այդ՝ փաստ չունեցողներու համար բնական է : Թէ մեր և թէ՛ ձեր գրածներն հրապարակի վերայ կեցած են . որջամիտ ընթերցողը կարող է դատաստան առնել մեր՝ թէ՛ ձեր գրածներն հիմ չալար հիմ քաշուլ չալար տեսակէն է : Բուն խնդիրն էր (ձեր կողմէն եղած) Նիկիոյ Ե . Ժողովը Տիեզերական ժողով է , մեր ի պատասխանի ասած էինք թէ՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ համար Ե . Տիեզերական ժողով չը կայ . նա միայն երբեք Տիեզերական ժողով կ'ընդունի : Դուք փոխանակ ձեր ըսածը հիմնաւոր փաստերով հաստատելու , երբք առանց փաստի և առանց սպացոյցի պնդեցիք թէ Հայոց Եկեղեցւոյն համար Ե . Տիեզերական ժողով է Նիկիոյ ժողովը և Յայսմաուրբէն նշանակութիւն չունեցող ինքնահնար վկայութիւն բերիք , եւ որպէս զի խնդիրն ծածկէք , Քաղկեդոնի ժողով մի մէջ ձգեցիք և անոր դաւանութեան վերայ մեզ հարցում ուղղեցիք առանց յիշելու ի վաղ ժամանակաց Հայաստանեայց Եկեղեցւոյ Քաղկեդոնի մասին տուած վճիռը և առանց Նիկիոյ Ե . Ժողովոյ մասին մեր գրածին պատասխանելու : Դուք որչափ ալ խոյս տալ ուղէք բուն խնդրէն , մեր դարձեալ հոն դառնալով մեր ասածը կ'երեքնենք թէ՛ մեր Եկեղեցւոյ համար բաց ի երբեք Տիեզերական Ս . Ժողովներէն ուրիշ Տիեզերական մը չը կայ , և թէ Նիկիոյ Ե . Ժողովը Տիեզերա-

կան չէ մեր Եկեղեցւոյ համար : Եթէ այս մասին ըսելը մի ունիք և ըսէք , պատրաստ եմք պատասխանելու . իսկ եթէ թողլով բուն խնդիրն ասկէջ անկէջ խօսքեր ընէք , մեզմէ պատասխան մի ստանաք :



ՀԱՅՐԵՆԵԱՅ յիշատակներն աւելի ազդու տալաւորութիւններ ունին պանդուխտներուն վերայ հեռաւր օտարութեան մէջ : Ոմանք Հայրենեաց հոգն ու ջուրն յիշելով՝ կը հառաչեն : Ոմանք Հայրենեաց փառքն ու շքեղութիւնն յուշ ածելով՝ կը մոայտազին : Ոմանք Հայրենեաց աւերն ու տւերակներն միտ բերելով՝ կ'արտասուեն : Ոմանք Հայրենի խրախճաններն ու սրարդ կերակուրներն յիշելով՝ ախ ու վախ կը քաշեն : Եւ այսպէս Հայրենիքն ունի բիւր հրապոյրներ , բիւր յիշատակներ , որք ամեն օր եւ ամեն ժամ կը յուղեն , կը շարժեն տարագիր պանդխտի սիրտն և շատ անգամ ձայն ու լեզու կը տան եւ Հայրենի յիշատակաց երգաբան կը դարձնեն :

Հայրենասիրական սրտագրաւ եւ բնական երգերն համարեալ թէ մեծաւ մասամբ այսպիսի պարագաներէ ծընունդ առած են : Առնական թեւերով սիրելիներուն բարեւագիր զրկել . ծիծեռնակն տարագրական վիշտերու պատգամաւոր առաքել առ ծնողս . հողմերու եւ զեփուռներու հետ խօսիլ , և այլն և այլն . այս ամենն պանդուխտ սրտի զգացմանց հոսանքներ են , որոց ազդիւրն անսպառ է և աննկարագրելի :

Ո՛վ կը կարծէ թէ Հայաստանի Հիւրիան անգամ լեզու պիտի տայ Լեհաստանի գաղթական Հայ պանդխտին գոխասանքներ երգելու : Եւ սակայն կը տեսնենք ահա Հիւրիայի հետեւեալ ֆոլսանքէն (որ մեր ձեռքն անցաւ , մեր գաղթական Ազգայնոց այցելութեան ժամանակ) որ ձերունի պանդուխտ Դպիրն չուզեր փոխել իւր հայրենի Հերիսան (Հարիսան) օտարութեան համագամներու հետ եւ գովառանք տալէն չը կշտանալով՝ կը յուսելու . “ Զինչ աղբ որ կան յայտմ աշխարհի , չը զօրեն տալ . բեզ գովբ ալ ժանի ” :

Մ . Վ .

ԳՈՎՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՀԵՐԻՍԱՅԻ

Ի հողոյ հաւասար անկէ , և յանարժան յեր ծառայէ , յերդիւնի Միշտ Դպրէ , շաք կարօտով Բարեւ հասցէ :

ԶՈՐԱԴՄՆ ձեր հարցանելով եւ զկենցաղն քննելով , Առողջ մնացք երկար ամօք , թէ ՚ի ցամաք եւ թէ ՚ի ծով , Մտամոլորս մեղաց գերի , թուղթ գրեցի Հերիսայի . Փութով առ ձեզ առաքեցի , միթէ բարի լուր դայ ինձի : Մինչ նայելի ես դեգերած , անձամբ գծուծ մաքր կորած , Եւ աշխարհ մրափած , կիտահիւանդ էի պատկած ,